



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

03.04.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/38**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/38 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված 12.03.2018թ. բողոքով հայտնել է, որ «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 2018թ. մարտի 6-ի թիվ 1 որոշմամբ՝ «Լաբորատոր նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՄԲԿ-ԳՀԱՊԶԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինները հանդիսանում են ախտահանիչ միջոցներ:

Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիր սյունակում Պատվիրատուն նշել է, որ «Ախտահանիչն ունենա ISO 9001, ISO 14001» պահանջը, իսկ թիվ 2-րդ չափաբաժնի համար՝ «Ունենա ISO 9001, ISO 14001» և «Ունենա Օլիմպոս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին՝ պահանջները:

Ընկերությունը նշել է, որ գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ն չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, որոնք հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

Պարտավորեցնելու «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում՝ հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ն ի լրումն 12.03.2018թ. ներկայացված բողոքի 13.03.2018թ. գրությամբ Խորհրդին խնդրել է՝

Պարտավորեցնելու «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների «Տեխնիկական բնութագիր» սյունակներում առկա պահանջները, որպեսզի դրանք չհիմնավորված խոչընդոտներ չառաջացնեն և հավասար պայմաններ ապահովեն բոլոր մասնակիցների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, նպաստելով պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը:

«Խաչպար» ՍՊԸ-ն ի լրումն 12.03.2018թ. ներկայացված բողոքի 20.03.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ 15.03.2018թ. ԳԲԽ-ԱՄ-2018/38 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ կայացած քննարկումների ընթացքում Պատվիրատուի և որպես երրորդ կողմ ներգրավված «Արմենֆարմ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցչի ներկայացրած փաստարկներն ու պնդումները չեն համապատասխանում ՀՀ-ում գործող իրավական

ակտերով սահմանված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին հետևյալ հիմնավորումներով.

«ՀՀ Կառավարության 30 հոկտեմբերի 2014թ. թիվ 1208-Ա որոշման Հավելված 1-ի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության՝ ԵԱՏՄ, մաքսային տարածքում արտադրված ապրանքների պետական գրանցումը ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկում առկա է «տեխնիկական պայմաններ» ներկայացնելու պահանջը (այդ թվում նաև ՀՀ արտադրողների համար): Այն, որ պահանջվող փաստաթղթերից հենց այդ՝ «տեխնիկական պայմաններ»-ն են հանդիսանում պետական գրանցումը ստանալու համար անհրաժեշտ հիմնական փաստաթղթերը, ապացուցվում է նրանով, որ ԵԱՏՄ պետական գրանցման վկայականում պարտադիր կերպով նշում է կատարվում հենց այդ՝ «տեխնիկական պայմաններ»-ի (ոռաներեն՝ ТУ) առկայության մասին:

ՀՀ տարածքում գործող բոլոր՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար՝ անկախ իրենց կազմակերպչական ձևից և գերատեսչական պատկանելիությունից, ախտահանիչ միջոցների կիրառման թույլատվությունը սահմանված է ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով:

Վերոհիշյալ հրամանի թիվ 20-րդ կետի համաձայն՝ ՀՀ-ում կիրառվող ախտահանիչ միջոցները և նյութերը օգտագործվում են դրանց կից մեթոդական ուղեցույցի պահանջների համաձայն՝ հաստատված ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

Պատվիրատուի կողմից «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ «Ունենա ISO 9001, ISO 14001» և «Ունենա Օլիմպոս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին» պահանջների ներառումները մասնակիցների համար փաստացի կերպով հանդիսանում են գնումներին մասնակցելու իրավունքի և որակական չափանիշների լրացուցիչ պահանջներ, ինչը որ հաստատեցին Պատվիրատուի լիազորված անձինք՝ պատասխանելով «ԳԲԽ-ԱՄ-2018/38» բողոքը քննող Խորհրդի անդամ պարոն Մ. Անանյանի հարցերին»:

Ընկերությունը հայտնել է, որ նման պահանջների ներառումները նախատեսված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, խտրական են, անհիմն կերպով բարդացնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ սահմանափակելով մրցակցությունը, ինչպես նաև չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար, չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալը, «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է Խորհրդին պարտավորեցնելու «ՄԲԿ-ԳՀԱՊԶԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ փոփոխելու հրավերի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների «տեխնիկական բնութագիր» սյունակներում առկա պահանջները՝ այնտեղից հեռացնելով ներառված «Ունենա ISO 9001, ISO 14001» և «Ունենա Օլիմպուս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին» պահանջները, որոնք անհիմն կերպով բարդացնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ սահմանափակելով մրցակցությունը, որպեսզի այդ պահանջները չհիմնավորված խոչընդոտներ չառաջացնեն և հավասար պայմաններ ապահովեն հնարավոր բոլոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ Խորհրդի 15.03.2018թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2018/38 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա ԻՍՕ 9001 որակի ստանդարտի ներկայացման պահանջի վերաբերյալ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն 16.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ «Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա», ուստի պատվիրատուն ԻՍՕ 9001 որակի միջազգային ստանդարտի ներկայացման պահանջ է ներկայացրել, քանի որ ՀՀ կառավարության 30 հոկտեմբերի 2014 թվականի N 1208-Ն «Արտադրանքի (ապրանքների) սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի պետական գրանցման վկայականի ձևը և այն .տալու կարգը, պետական գրանցման վկայականների ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» որոշման համաձայն՝ ԵԱՏՄ տարածքում ախտահանիչ և վարակազերծիչ նյութերի արտադրանքները իրացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ արտադրանքները ունենան ԵԱՏՄ պետական գրանցում: ԵԱՏՄ պետական գրանցում ստանալու համար ախտահանիչ արտադրող ընկերությունը պարտավոր է ներկայացնելու որակի ստանդարտը հավաստող փաստաթուղթը համաձայն՝ ՀՀ կառավարության N 1208-Ն որոշման հավելված 1-ի 10-րդ կետի բ ենթակետի «պատրաստողի (արտադրողի) կողմից վավերացված փաստաթղթերի (ստանդարտներ, տեխնիկական պայմաններ, կանոնակարգեր, տեխնոլոգիական հրահանգներ,

բաղադրագրեր, առանձնահատկություններ, բաղադրության մասին տեղեկություններ) պատճենները, որոնց համաձայն արտադրվում է արտադրանքը»:

Ամփոփելով վերը նշվածը, «Արմենֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ տեխնիկական բնութագրերում առկա ԻՍՕ որակի ստանդարտի ներկայացման պահանջը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

3. «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Խորհրդին ուղղված 21.03.2018թ. թիվ 016/44 գրությամբ հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.03.2018թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

««Խաչպար» ՍՊԸ-ն դիմել է Խորհրդին և հայտնել է, որ «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված թիվ 1 և թիվ 2 չափաբաժինները խտրական են, որի արդյուքում խախտվել է «Խաչպար» ՍՊԸ-ի իրավունքները»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող

պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով թիվ 1 և 2 չափաբաժինների մասով նախատեսել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան այնպիսի ստանդարտներ, որոնք ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ապրանքի պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով չի հիմնավորել թե կոնկրետ ընկերության, որ իրավունքների խախտման մասին է խոսքը, այլ ընդամենը նշել է, որ եթե տեխնիկական բնութագրով նախատեսվել է ISO ստանդարտներ, ապա դա խտրական մոտեցում է:

Պատվիրատուն նշել է, որ ISO-ն միջազգային ստանդարտ է, որը տրվում է տվյալ ոլորտում լավագույն ապրանքներին: Բացի այդ, Պատվիրատուն ինքն է սահմանում այն ապրանքների տեխնիկական բնութագրերը, որոնք ցանկանում է իր կարիքների համար ձեռքբերել:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Պատվիրատուն հայտնել է, որ չի խախտել վերոնշյալ հոդվածով սահմանված որևէ պահանջ, քանի որ հստակ, առանց որևէ հղման նկարագրել է այն ապրանքների բնութագրերը, որը ցանկանում է ձեռքբերել:

Տվյալ պարագայում, միայն այն պատճառով որ «Խաչպար» ՍՊԸ-ն հանդիսանում է ՌԴ ընկերության պաշտոնական ներկայացուցիչ, և այդ ընկերությունը նման որակի

ապրանքներ չի արտադրում, չի կարելի ասել, որ տեխնիկական բնութագրերը խտրական են գրված:

Պատվիրատուն հայտնել է, որ ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված այն դրույթին, որ Պատվիրատուի կողմից խտրական է և սխալ է սահմանվել, որ ապրանքը պետք է ունենա Օլիմպոս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին, ապա Պատվիրատուն ունի Եվրոպական արտադրության մոտ 12 000 000 ՀՀ դրամ արժողությամբ Օլիմպոս ֆիրմային գաստրոսկոպ սարք՝ Կոդ Q-20: Այդ սարքի պատշաճ և երկարատև օգտագործման համար արտադրող երկրի ընկերությունը նշել է, որ սարքը անհրաժեշտ է ստերելիզացնել միայն որակյալ նյութերով, այդ իսկ պատճառով Ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանվել է վերոնշյալ դրույթները: Սակայն Պատվիրատուն ունենալով Օլիմպոս ֆիրմային սարքավորում, բնութագրով չի նշել միայն այդ բժշկական սարքավորումներ արտադրող ընկերության անվանումը, այլ նշել է մի շարք այլ ընկերությունների անվանումներ, որպեսզի արհեստական խոչընդոտներ չստեղծվեն գնման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների համար:

Պատվիրատուն գտնում է, որ «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 հավելվածով նախատեսված 1-ին և 2-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերը կազմվել են Օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան, որի արդյունքում չի կարող խախտվել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ գնման գործընթացի հնարավոր մասնակիցների համար չի կարող առաջացնել որևէ խոչընդոտ և չի կարող խանգարել մասնակցելու գնման ընթացակարգին:

Պատվիրատուն նշել է, որ պետք է մասնակցել և մրցակցային պայմաններում փորձել ներկայացնել լավագույն ապրանքը մատչելի գներով, այլ ոչ թե փորձել պարբերաբար բողոքներ ներկայացնելու շնորհիվ անհարկի ձգձգել գնման ընթացակարգի կայացումը, քանի որ վերջապես խոսք է գնում բուժհաստատության և մարդկային կյանքի մասին, իսկ Պատվիրատուն տվյալ պարագայում չի կարող դիսկի դիմել և ձեռքբերել անորակ ապրանք:

Ամփոփելով վերոգրյալը, «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ն Խորհրդին խնդրել է «Խաչապար» ՍՊԸ-ի 12.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել ամբողջությամբ:

«Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՄԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով թիվ 1 և 2 չափաբաժինների մասով նախատեսվել է գնման ենթակա ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հավելված N 1
2018թ. կնքված

«ԲՄԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով սայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համարը	Անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	Հակասեպտիկ գել ձեռքի հիգիենիկ եւ վիրաբուժական մշակման համար	Բաղադրությունը - էթանոլ 70%+-2%, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքստուրոպիկ գել (մաշկի վրա վեր է անվում հեղուկի՝օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ոնզորոտիվ և գերզգայունացնող ազդեցություններ և հոտավետ բաղադրիչներ: Ախտահանիչ նյութն օժտված է մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիանների), սնկերի (ներառյալ Կանդիդա գեղի խմորասնկեր),

		<p>վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ) A գրիպի H5N1, H1N1) նկատմամբ՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների:</p> <p>Հակամանրելային երկարացված ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Փաթեթավորումը - 1 ծավալի պոլիէթիլենային տարա դիսպենսերով:</p> <p>Մատակարարման պահին ապրանքի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի PH-5.0-6.0: Տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3մլ- մինչև 30վրկ., մեկ վիրարոժական մշակումը ոչ ավել քան -6մլ - մինչև 90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: 1լ նախատեսված է ոչ պակաս քան 333 հիգենիկ և 167 վիրարոժական մշակման համար: Ախտահանիչն ունենա ISO 9001, ISO 14001: ՀՀ ԱՆ գրանցման հավաստագրերը և մեթոդական հրահանգը պարտադիր են:</p>
2	<p>Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազեր ծոմային և էնզիմատիկ մաքրման համար:</p>	<p>Բաղադրությունը- ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ (Գուանիդինի- ի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%), ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր.:</p> <p>Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով):</p> <p>Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ քաժակով:</p> <p>1լիտր խտանյութից պատրաստվի ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ զրամդրական և գրամբացատական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկրոակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների):</p> <p>Աշխատանքային լուծույթի ախտանեխիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված քազմակի օգտագործման համար:</p> <p>Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա ISO 9001, ISO 14001, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Ունենա Օլիմպուս, Շպորց, Պենկոպս, Ֆուչի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համապետեղելիության մասին:</p>

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 12.03.2018թ. բողոքը և 20.03.2018թ. ի լրումն բողոքի ներկայացված գրությունը, «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 21.03.2018թ. թիվ 016/44 գրությունը և «Արմենֆարմ» ՍՊԸ-ի 16.03.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման

առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՄԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 1-ին չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը սյունակում նշվել է, որ ձեռքբերվող ախտահանիչն ունենա ISO 9001, ISO 14001, իսկ թիվ 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սյունակում նշվել է, որ գնման ենթակա ապրանքը ունենա Օլիմպոս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին:

«Խաչպար» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ գնման առարկաների բնութագրերը նման ձևով կազմելով՝ «Մասիսի ԲԿ» ՓԲԸ-ն չի մնավորված խոչընդոտներ է առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի համար, որոնք հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջված ISO 9001, ISO 14001 ստանդարտների վերաբերյալ Խորհուրդը 21.03.2018թ. թիվ ԳԲԽ-

ՄԱ/1/5115-18 գրությամբ դիմել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին, որին ի պատասխան՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 23.03.2018թ. թիվ ԵԱ-95 գրությամբ հայտնել է հետևյալը.

1. Հայաստանի Հանրապետությունում ստանդարտի կարգավիճակով գործում են ՀՍ ԻՍՕ 9001-2016 և ՀՍ ԻՍՕ 14001-2016 ստանդարտները, որոնք ներդաշնակ են միջազգային ԻՍՕ 9001:2015 և ՀՍ ԻՍՕ 14001:2015 ստանդարտներին:

2. Հայաստանի Հանրապետությունում ախտահանիչ միջոցներ արտադրող ընկերությունների համար սահմանափակումներ առկա չեն, քան որ ՀՍ ԻՍՕ 9001-2016 և ՀՍ ԻՍՕ 14001-2016 ազգային ստանդարտները կիրառելի են բոլոր տեսակի կազմակերպությունների համար՝ անկախ չափերից, գործունեության տեսակից և բնույթից ու սահմանում են պահանջներ որակի և շրջակա միջավայրի կառավարման համակարգերի նկատմամբ:

3. Այդ ստանդարտների պահանջներն ընդհանուր են և վերաբերվում են ոչ թե կոնկրետ արտադրանքին կամ ծառայությանը, այլև արտադրական գործընթացին, ընթացակարգերին և ուղղված են սպառողների պահանջներին համապատասխանող արտադրանք և ծառայություններ հետևողական մատակարարելու կազմակերպության ունակությանը:

4. Պետական գնումների շրջանակներում պատվիրատուների կողմից կառավարման համակարգի ստանդարտներ, այդ թվում՝ ԻՍՕ 9001 և ԻՍՕ 14001 ստանդարտներ ունենալու պահանջը մասնակիցների համար չի կարող համարվել խտրական մոտեցման դրսևորում, քանի որ այդ ստանդարտները կիրառելի են բոլոր տեսակի կազմակերպությունների համար՝ անկախ չափերից, գործունեության տեսակից և բնույթից:

Այսպիսով, հաշվի առնելով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 23.03.2018թ. թիվ ԵԱ-95 գրությունը, մասնավորապես այն որ պետական գնումների շրջանակներում պատվիրատուների կողմից ԻՍՕ 9001 և ԻՍՕ 14001 ստանդարտներ ունենալու պահանջը մասնակիցների համար չի կարող համարվել խտրական մոտեցման դրսևորում, քանի որ այդ ստանդարտները կիրառելի են բոլոր տեսակի կազմակերպությունների համար՝ անկախ չափերից, գործունեության տեսակից և բնույթից, միևնույն ժամանակ այն, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի

համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ **հիմնված միջազգային սրանդարտների** և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից ԻՍՕ 9001 և ԻՍՕ 14001 ստանդարտներ ունենալու պահանջը չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սյունակում նշված պահանջը, այն է՝ գնման ենթակա ապրանքը ունենա Օլիմպոս, Շտորց, Պենտաքս, Ֆուջի կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող բժշկական սարքավորումներ արտադրող ընկերություններից երաշխավորություն համատեղելիության մասին, խտրական է, ապա Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Պատվիրատուն Խորհրդին ուղղված 21.03.2018թ. թիվ 016/44 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնով նման պահանջ է սահմանվել, քանի որ Պատվիրատուն ունի Եվրոպական արտադրության մոտ 12 000 000 ՀՀ դրամ արժողությամբ Օլիմպոս ֆիրմային գաստրոսկոպ սարք՝ Կոդ Q-20:

Միաժամանակ Պատվիրատուն Խորհրդին է տրամադրել «Օլիմպոս Մոսկվա» ընկերության տեղեկատվական նամակը, որտեղ ընկերությունը նշել է թվով 12 ախտահանիչ միջոցների ցանկ և հայտնել է, որ Օլիմպոս ընկերության արտադրանքը հանդիսացող էնդոսկոպների ախտահանման համար երաշխավորվում են այդ ախտահանիչ միջոցները. միաժամանակ տեղեկացնելով, որ էնդոսկոպների ոչ ճիշտ մշակման և ախտահանման դեպքում Օլիմպոս ընկերությունը չի պարտավորվում իրականացնելու երաշխիքային սպասարկում:

Միաժամանակ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի,

Ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի թիվ 2-րդ չափաբաժնով գնման առարկայի հատկանիշները բնութագրելիս օգտագործվել է «կամ այլ համաշխարհային ճանաչում ունեցող» բառերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Այսպիսով, գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական նկարագիրը թիվ 2-րդ չափաբաժնի մասով օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման: Խորհուրդը գտնում է, որ հրավերի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքը, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի նման պայմաններում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ